ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2014թ. թիվ 338-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 27.05.2014թ. թիվ 01/15/2743-14 գրությամբ ներկայացված ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի գրությունը և ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից տրված եզրակացությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի 13-ի «Քաղաքաշինության բնագավառում Լոռու մարզի համայնքների ղեկավարների գործունեության վերահսկողության մասին» թիվ 80-Ա որոշման գործողությունը կասեցնել մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. հոկտեմբերի 12-ի թիվ 624 որոշման վերաբերյալ վերջնական ակտի կայացումը:

2. Լոռու մարզի համայնքներում քաղաքաշինության բնագավառի վերահսկողությունն իրականացնել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1] հոդվածով սահմանված կարգով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. սեպտեմբերի 24
ք.Վանաձոր